

# Ճաֆրանեկի Ժառանգությունը

հեղինակ՝ Յարուսլավ Հաշեկ  
թարգմանիչ՝ Ռոզա Պետրոսյան, Գուրգեն Գալստյան  
աղբյուր՝ «Ճաֆրանեկի-ժառանգությունը»

Բոլոր պարտադիր ձևականություններից հետո պարզվեց, որ Ֆրանտիշեկ Ճաֆրանեկի ժառանգությունը կազմում է ուղիղ յոթ հելլեր: Ահա և ամբողջ հարստությունը, որ մնացել էր այդ բարի մարդուց: Սակայն ամանատահանն այն էր, որ Ճաֆրանեկը ժառանգորդներ չուներ, և պետությունը ստիպված էր այս գումարը վերցնել ի պահ: Յոթ հելլերը դրվեց պետական դեպոզիտ, և իշխանությունները աշխուժորեն ձեռնամուխ եղան ժառանգորդներ փնտրելու գործին:

Նոտարական գրասենյակն սկսեց մոլեգին գործունեություն ծավալել: Ամենից առաջ ժառանգության գործավար նշանակվեց: Իր իրավասության շրջանակներում սա կազմեց հստակ, սպառիչ գրություն և տպագրել տվեց բոլոր թերթերում ու հանդեսներում՝ վճարելով ըստ հայտարարությունների սակագների: Գործավարը հոգ տարավ նաև, որպեսզի Ճաֆրանեկին վերաբերող նյութն ընդգրկվի թերթերի տեղական լուրերի շարքում:

Հայտարարությունը տեղեկացնում էր.

«Սույն թվի հունիսի տասնյոթին քաղաքական հիվանդանոցում վախճանվեց ենթավարպետ Ֆրանտիշեկ Ճաֆրանեկը՝ վաթսուկյոթ տարեկան, ըստ ունեցած տեղեկությունների՝ ամուրի: Հանգուցյալի ժառանգությանը հավակնող անձինք հրավիրվում են օկրուգային դատարանի նոտարական գրասենյակ»:

Մի խոսքով, ժառանգության գործավար պան Կամեյկան, թևքերը քշտելով, կպավ գործի: Հանգուցյալ Ճաֆրանեկի անհայտ ազգականներին հայտաբերելու փնտրտուքները նա սկսեց այնքան հիմնավոր, որին ընդունակ են միմիայն ավստրիական հիմնարկությունները:

Գատական մանր աստիճանավոր Կամեյկան մինչև այդ իրեն կարողացել էր դրսևորել ուրիշ հարցերում, բայց այնպիսի պատկառելի գործ, ինչպիսին ժառանգության գործավար լինելն էր, նարան դեռևս չէր վիճակվել: «Կանեմ ամեն հնարավոր բան,— որոշեց նա,— և, ինչ էլ պատահի, պետք է հասնեմ արդարության»:

Մինչև Կամեյկան առանց ձեռքերը ծալելու աշխատում էր, դեպոզիտ դրված յոթ հելլերը հանգրվան էին գտել ուրիշ գումարների հետ պետքական բանկում, որի շուրջը հրացանավոր զինվոր է քայլում:

Կամեյկան քնած չէր: Կարճ ժամանակամիջոցում հիսուն հայտարարություն տպագրել տվեց Պրագայի և ծայրամասերի թերթերում, որը պետական գանձարանի վրա նստեց վեց հարյուր կրոն: Գրագիր Շմիդտը մինչև կոկորդը թաղված էր աշխատանքի մեջ. սա անընդհատ ծանուցագրեր էր ուղարկում գանազան Ճաֆրանեկների, որոնք իրենց համար

անսպասելի դատարան ներկայանալու կանչ էին ստանում: Պարզվեց, որ միայն Պրագայում հիսունութ Շաֆրանեկ կար:

Այսպիսի նյութի հետ կարելի էր արդեն աշխատանք տանել: Դատարան կանչված այդ դժբախտների հուզմունքը, որ երևում էր, երբ նրանց քննում էին ամենայն խստությամբ և հիմնավորությամբ, մեծ բավականություն էր պատճառում . . .

Ի դեպ, Կամեյկան ինքն էլ քիչ չէր տառապում այդ Շաֆրանեկների պատճառով: Սրանցից ոմանց հարկ էր լինում օձիգներից բռնած դատարան քարշ տալ, կամ, արտահայտվելով պաշտոնական լեզվով՝ դատարան էր բերվում պահակախմբի հսկողությամբ: Այսպես եղավ Ալոիս, Բենոն, Արթուր, Վիլեմ, Կառլ, Անտոնին և Ֆիլոմենա Շաֆրանեկների հետ: Վերջինս սարսափելի աղմուկ բարձրացրեց, երբ ոստիկանը նրան արթնացրել էր առավոտյան ժամը վեցին: Երկու Շաֆրանեկ՝ Միխայլը և Բոգոսլավն այդ դեպքի պատճառով զրկվեցին իրենց աշխատանքից, քանի որ ոստիկանները նարն հետևելից ուղիղ աշխատավայր էին գնացել, իսկ դա գործատիրոջ վրա չափազանց ցնցող տպավորություն էր թողել:

Ասենք, այս ամենը դատարկ բան էր, միայն թե պատահանվեր գործի իրավաբանական կողմը:

Պրագայի հետ հաշիվները մաքրելուց հետո Կամեյկան զինվեց հասցեների գրքով և անցավ Պլզենին: Պարզվեց, որ այստեղ կան քսանվեց Շաֆրանեկներ: Իսկ Կլատովիում նրանք տասն էին:

Մի խոսքով, ամբողջ Չեխիայի դատական հիմնարկությունները հեղեղվել էին միայն Շաֆրանեկների գործերով: Մլադա Բոլետավում հարցաքննվել էին չորս, Կոլինում՝ ութ, Գորժիցիում՝ մեկ Շաֆրանեկ: «Վիսոկի Միդում ոչ մի Շաֆրանեկ չկա», — արձանագրել էր Կամեյկան: Իսկ մի քանի օր հետո, վերադառնալով տուն, կնոջը հանդիսավորապես հայտարարեց. «Բուդապեշտում՝ ութ»: Բոլոր Շաֆրանեկները հարցաքննվել էին տեղական դատարաններում, և Կամեյկան շփում էր ձեռքերը .

— Ինչ էլ պատահի, պիտի հասնեմ արդարադատության:

Ամռանն օկրուգային դատարանում օգտագործվեց վեց հարյուր քսանութ նոր թղթապանակ: «Շ» տառի համար ստիպված էին նոր պահարան ձեռք բերել և լարցուցիչ վարձել հատուկ գրագիր: Աշնանն անխոնջ Կամեյկան անցավ Մորավիային:

— Չպետք է կորցնել ոչ մի թուպե, — ասում էր նա իր ենթականերին: — Սկզբում Բոնոն, դրանից հետո՝ Օլոմոուցը, և ամեն ինչ հոյակապ կստացվի: Իստապոլյն կարգուկանոն. օկրուգ առ օկրուգ: Այնուհետև հերթը կհասնի Միլեգիային: Այո, պարոնայք, դատական մարմինների համար հեռավորությունը ոչ մի նշանակություն չունի:

«Շ» տառով պահարանում ավելացան ևս հինգ հարյուր վաթսուվեց գործեր: Գրագիրներն անհանգիստ էին քնում գիշերը և երազում Շաֆրանեկներ տեսնում:

Մի գեղեցիկ ր Կամեյկան հաղթական հայտարարեց .

— Իսկ հիմա կվերցնենք Վիեննան: Հարկավոր է օգտագործել այդ քաղաքի ոստիկանությունը: Թանկ է ամեն թուպեն: Հեռագրեք՝ այնտեղ Շաֆրանեկներ չկան:

Շաֆրանեկներ կային: Վիենայի ոստիկանությունը Պրագայի դատարանին տրամադրեց մի Շաֆրանեկի և մի հատ էլ Շաֆրանի: Ճակատագրի բերումով սրանք հարգված վաճառականներ էին, որ չգիտեին, թե ինչ մտածեն, երբ գիշերը իերնց բռնեցին ու տարան Պրագա: Այդ կապակցությամբ պառլամենտում նույնիսկ հարցապնդում էր եղել:

Կամեյկան շողում էր:

— Ամեն ինչ լավ է գնում,— կրկնում էր նա:— Կտեսնե՞ք՝ ես պիտի գտնեմ բոլոր այդ ժառանգորդներին: Բայց ժամանակն է, որ մենք դիմենք արտասահմանի մեր կոնսուլություններին:

Օկրուգային դատարանի գրասենյակում ավելացան ևս հարյուր յոթանասուն երկու գործեր: Կոնսուլությունները պակաս եռանդ չցուցաբերեցին, և կես տարի անց Կամեյկան կարող էր գլուխ գովել իսկապես հոյակապ արդյունքներով: Գերմանիայում հայտնաբերվեցին երեք հարյուր տասնչորս Շաֆրանեկներ, Ֆրանսիայում՝ երկու, Անգլիայում՝ ինը, Ռուսաստանում՝ տասներեք (ձերբակալվել և արտրվել են Սիբիր), Թուրքիայում որոնվում էր մի Շաֆրանեկ-բեյ: Իսպանիայում չկար ոչ մեկը, բայց դրա փոխարեն Ամերիկայում միանգամից ութսուն հատ հայտնաբերվեց: Ավստրալիայից պատասխան չեկավ, իսկ Պեկինի պատասխանը բացասական էր: Տոկիոն խանդավառությամբ հաղորդեց, որ այդպիղի ազգանուն չեն էլ լսել:

— Պարոնայք,— բավարարված հայտարարեց Կամեյկան իր ենթականերին,— ամեն ինչ այնքան լավ է գնում, որ ավելի լավ չի կարող լինել: Ահա կտեսնեք, երկու տարի էլ չի անցնի, երբ մենք կհայտնաբերենք ժառանգորդներին: Իսկ մինչ այդ ձեզանից խնդրում եմ աչալրջություն: Գրեք բոլոր դատարաններին, հետաքննել, փնտրել, մի բոպե անգամ շունչ քաշել: Մեր ծախսերն առայժմ կազմում են միայն տասնմեկ հազար կրոն, որ չնչին գումար է՝ իրավական այս գործողության կարևորության համեմատ:

Որոնումները շարունակվում էին: Սակայն մի անգամ Կամեյկան հանդիսավոր մտավ գրասենյակ ու դիմեց գրագիր Շմիդտին.

— Խնդրում եմ պաշտոնապես ձևակերպել իմ հավակնությունը ժառանգության վերաբերյալ: Մի ծիծաղե՞ք, պարոնայք, ես չեմ ցնդել: Բարի եղեք բոլոր կանոններով հարցաքննել ինձ: Անուն-ազգանո՞ւնս: Պատասխանում եմ՝ Յան Կամեյկա: Հանգուցյալ Ֆրանտիշեկ Շաֆրանեկի հետ որևէ ազգակցական կապ ունե՞ք: Պատասխանում եմ՝ պարոնայք, այո, ունեմ: Տեսնում եմ՝ դուք զարմացած եք... Այո, պարոնայք, մենք վերջապես հասել ենք բաղձալի նպատակին: Իմ մոր աղջկական ազգանունը եղել է Շաֆրանեկ: Ես այդ բանը հայտնաբերել եմ երեկ, երբ դասավորում էի մեր ընտանեկան փաստաթղթերը: Նրա կրտսեր եղբայրը, որի բախտը կյանքում չի բերել, Ունետեցիում աշխատել է որես վառարանագործ: Այս անձնավորությունը հենց նույն հանգուցյալ Ֆրանտիշեկ Շաֆրանեկն է, որ թողել է ժառանգությունը: Հայտարարում եմ իմ իրավունքները և խնդրում եմ կցել գործին:

Մինչև կկատարվեին մանր-մունր ձևակերպությունները, անցավ մոտ հինգ ամիս, և Կամեյկան տիրացավ ժառանգությանը: Պետական դեպոզիտից նրան հանձնվեց յոթ հեղեր, որոնք նա ոսկեչրեց և որպես զարդ ամրացրեց իր ժամացույցի շղթային:

